ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 521775 #427, 099400840
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

12.03.2012թ.
162-ի 5

ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար
պարոն Մանուկ Վարդանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Վարդանյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունը.

1. «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն արգելվում է ծխելը հասարակական տրանսպորտում, այդ թվում՝ տաքսիներում: Սակայն ամեն օր ականատես ենք լինում օրենքի խախտման դեպքերի: Մասնավորապես, մի շարք տաքսի ծառայությունների աշխատակիցներ, օրինակ՝ տաքսի DREAM-ի վարորդները ուղեւորներին սպասարկելու ընթացքում ծխում են: Նման դեպքերում ի՞նչ պետք է անի ուղեւորը, ո՞ւմ եւ ի՞նչ կարգով բողոքի:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքներով՝
Անահիտ Քոչարյան
Հանրային կապերի պատասխանատու